ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության Կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջեւ Հայաստանի Հանրապետության ոստիկանության եւ Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի մարմինների իրավասությանը վերաբերող հարցերի շուրջ տեղեկատվական փոխգործակցության եւ էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման մասին» Համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) նախագծի ստորագրման նպատակահարմարության մասին

Հայաստանի Հանրապետության ոստիկանության եւ Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի մարմինների միջեւ տեղեկատվական փոխգործակցության եւ էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման համագործակցությունը զարգացնելու նպատակով առաջարկվում է կնքել երկու պետությունների կառավարությունների միջև համագործակցության մասին համաձայնագիր, որը հնարավորություն կընձեռի՝

- միմյանց տրամադրել ներքին գործերի մարմինների/ոստիկանության վարույթում առկա տեղեկատվությունը եւ համաձայն տեխնիկական արձանագրությունների՝ տեղեկատվական համակարգերի ռեսուրսների անհատույց հասանելիությունը՝ համաձայնեցված ծավալով եւ բացառապես ծառայողական նպատակներով,
- ամրագրել տեղեկատվության տրամադրումը, ձեռքբերումը եւ ոչնչացումը, իրավասու մարմնի հասանելիությունը տեղեկատվական համակարգի ռեսուրսներին,
- տեղեկատվություն փոխանակել անդրսահմանային կապուղիներով, այդ թվում՝ իրականացնել անհատական տվյալների պաշտպանություն համաձայն լիազորված ստորաբաժանումների կողմից մշակված տեխնիկական արձանագրությունների,
- ապահովել սույն Համաձայնագրի շրջանակներում ձեռք բերվող տեղեկատվության անվտանգությունը:

Համաձայնագրի ստորագրումը կնպաստի Հայաստանի Հանրապետության ոստիկանության եւ Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի մարմինների միջեւ տեղեկատվական փոխգործակցության, էլեկտրոնային եղանակով տեղեկատվության, ինչպես նաեւ անհատական տվյալների փոխանակման զարգացմանը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ոստիկանությունը նպատակահարմար է գտնում Համաձայնագրի ստորագրումը:

ՀՀ ոստիկանության շտաբի պետ,
ոստիկանության գնդապետ **Արմեն Մկրտչյան**

«27» 07. 2020թ.